«ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՔՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ» ԱՄԲԻՈՆԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՍՏ ԱՄԲԻՈՆԻ 2020-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

Համառոտ տեղեկատվություն ամբիոնի վերաբերյալ

Դասընթացներ

«Ստոմատոլոգիայի» ամբիոնը իրականացնում է հետևյալ մասնագիտական առարկաների դասավանդումը՝ «Նյութագիտություն», «Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա», «Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա», «Վիրաբուժական ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա», «Թերապևտիկ ստոմատոլոգիա», «Վիրաբուժական ստոմատոլոգիա», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա», «Դիմածնոտային վիրաբուժություն», «Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա», «Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա», «Օրթոդոնտիա և մանկական հարադրավորում», «Գենետիկորեն պայմանավորված հիվանդություններ»:

Ամբիոնում ներգրավված դասընթացները ուսուցանվում են միայն ստոմատոլոգիական ֆակուլտետում:

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

Ամբիոնն ապահովված է համապատասխան մասնագետներով և 2022 -2023 ուստարում ունեցել է թվով 10 աշխատակից /1 բ. գ. թ.և 1 կ. գ. դ./:

Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը՝ 41 տարեկան:

2022-2023 ուստարում ամբիոնի աշխատանքների ուսումնական ծավալը կազմել է 5040 ժամ:

Դասախոսների կողմից ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել է 4327 ժամ:

«Վիրաբուժական ստոմատոլոգիա» առարկան դասավանդող դասախոս Էրիկ Սարգսյանը և «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա» դասավանդող Տանյա Մարկարյանը ազատվել են աշխատանքից սեփական դիմումի համաձայն: Նրանց փոխարինել են, Էրիկ Սարգսյանին՝ Համլետ Մելքոնյանը, իսկ Տանյա Մարկարյանին՝ Դելարամ Անսարին:

«Ստոմատոլոգիայի» ամբիոնը պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմում այլ փոփոխություններ չունի:

Ամբիոնի ուսումնագիտական ռեսուրսները

«Ստոմատոլոգիայի» ամբիոնի առարկաները դասավանդվում են ԱԲՀ-ի գլխավոր մասնաշենքի հատուկ կահավորված լսարաններում և ստոմատոլոգիական կլինիկաներում: Վերջիններս ապահովված են ստոմատոլոգիական ժամանակակից սարքավորումներով և

գործիքներով, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին ձեռք բերել և զարգացնել ձեռքի հմտություններ:

Ուսումնական և կլինիկական բազա

Ամբիոնում դասավանդվող դասընթացները անցկացվում են՝

- ԱԲՀ գլխավոր մասնաշենքի մասնագիտացված լսարան- կաբինետներում,
- Համալսարանի Գիտաբժշկական ուսումնական կենտրոնի ստոմատոլոգիական կաբինետներում և տեխնիկական աշխատանոցում,
- «Արմենիա» բ/կ,
- «My City Dentist» ստոմատոլոգիական կլինիկայում:

➢ Ուսուցման մեթոդները ամբիոնում՝

- Դասախոսություններ,
- Սեմինար, գործնական պարապմունքներ,
- Թեստային, գրավոր, բանավոր հարցումներ,
- Ինքնուրույն աշխատանքներ /ռեֆերատներ, թեմատիկ շնորհանդեսներ/:
- Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ /ցուցադրում, տեսացուցադրում, իրավիճակային խնդիրների լուծում, կլինիկական դեպքերի վերլուծություն, խմբային մեթոդ, խաղեր, հարց ու պատասխան և այլն/:

➢ Ամբիոնն առաջնորդվում է համալսարանում գործող «Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգով».

- միջանկյալ ստուգումներ,
- ստուգարքներ,
- քննություններ,
- ինքնուրույն աշխատանքներ /ռեֆերատներ, թեմատիկ շնորհանդեսներ/,
- հաճախումներ,
- սեմինար, գործնական պարամունքներին ուսանողների մասնակցությունը:

Հետազոտությունների հիմնական ուղղությունները և ձեռքբերումները

Հաշվետու ժամանակաշրջանում, «Ստոմատոլոգիայի» ամբիոնը հետազոտություններ չի կատարել:

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 1.1. Ամբիոնի առարկայական դասընթացների թվայնացում, տեսանյութերի բազայի ստեղծում

Հաշվետու ժամանակահատվածում /2022-2023 ուստարվա ընթացքում/ վերանայվել են «Ստոմատոլոգիայի» ամբիոնի առարկայական ծրագրերը և նկարագրերը, թվայնացվել դասավանդվող դասընթացների նյութերը՝ դասագրքեր, դասախոսություններ, տեսաներկայացումներ /Հիմք՝ ԱԲՀ-ի էլ. գրադարանում, «Ստոմատոլոգիայի» ամբիոնի էլեկտրոնային և թղթային տարբերակով առկա առարկայական ծրագրերը և նկարագրերը/: Այժմ առարկայական ծրագրերը և նկարագրերը ունենք նաև անգլերենով:

Գործողություն 1.2. Դասալսումների և դրանց քննարկումների բարելավում

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում դասավանդվող բոլոր դասընթացներից իրականացվել են 22 դասալսումներ: Դրանց պարբերաբար քննարկումները ի հայտ են բերել դասապրոցեսում ծագող խնդիրներն ու թերությունները, որոնց բացահայտումը հնարավորություն է ընձեռել բարելավման աշխատանքներ տանել դրանց ուղղությամբ՝ վերանայել դասավանդման մեթոդները, ցուցաբերել ուսանողակենտրոն մոտեցում: Կատարված բարեփոխումները տեսանելի էին ուսումնական ընթացիկ աշխատանքներում /Հիմք՝ թիվ 5, 6, 10 արձանագրություններ/:

Գործողություն 1.3. Ամբիոնային աշխատանքների պլանավորում և համակարգում

«Ստոմատոլոգիայի» ամբիոնը 2022-2023 ուստարվա ընթացքում համակարգել և իրականացրել է 2022-2023 ուստարվա ծրագրով նախատեսվածը: Կազմվել են յուրաքանչյուր առարկայի օրացուցային պլան, դասալսումների, հերթապահության, միջանկյալ ստուգարքների և քննությունների ժամանակացույց, կատարվել է ամբիոնի աշխատանքների պլանավորում և համակարգում: 2022-2023 ուստարում պլանավորվել և կազմակերպվել են ամբիոնում դասավանդվող առարկաների միջանկյալ և ավարտական քննությունները՝ նախապես վերանայված հարցաշարերով, թեսթերով և քննական տոմսերով /Հիմք՝ 2022-2023 ուստարվա ծրագիր, յուրաքանչյուր առարկայի օրացուցային պլան, դասալսումների, հերթապահության, միջանկյալ ստուգարքների և քննությունների ժամանակացույց/:

Գործողություն 1.4. Մասնակցություն ԱԲՀ-ի գիտական խորհրդի նիստերին

2022-2023 ուստարում «Ստոմատոլոգիայի» ամբիոնը մասնակցել է գիտական խորհրդի բոլոր 14 նիստերին: Հարցադրումներն ու քննարկումները տեղի էին ունենում յուրաքանչյուր նիստի օրակարգի համաձայն:

Գործողություն 1.5. Փոխադարձ դասալսումների պլանավորում և անցկացում

Հիմք ընդունելով 2022-2023 ուստարվա դասալսումների ժամանակացույցը՝ իրականացվել են «Նյութագիտություն», «Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա», «Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա», «Վիրաբուժական ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա», «Թերապևտիկ ստոմատոլոգիա», «Վիրաբուժական ստոմատոլոգիա», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա», «Դիմածնոտային վիրաբուժություն», «Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա», «Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա», «Օրթոդոնտիա», «Գենետիկորեն պայմանավորված հիվանդություններ» առարկաների դասալսումներ /Հիմք՝ 4, 5, 6, 8, 9,10 արձանագրություններ/:

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գործողություն 2.1. Խորհրդատվությունների տրամադրման աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսները պարբերաբար իրականացրել են խորհրդատվություններ և խորհրդակցություններ՝ ԱԲՀ ռեկտորի հրամանով և կուրսի խորհրդատուների կանոնակարգի համաձայն: Դրանք ուղղված են եղել՝ ընթացիկ և միջանկյալ քննությունների հետ կապված հարցերի, քննաշրջանի կազմակերպման, անհատական

խնդիրների քննարկմանը: Խորհրդատուները կցվել են ուսանողներին ըստ կուրսերի: Հաշվետու ժամանակահատվածում «Ստոմատոլոգիայի» ամբիոնի խորհրդատուներն են եղել Գ. Մանաշյան, Ա. Զեյնալյան, Վ. Կարապետյանը: Վերը նշված աշխատանքները դրական ազդեցություն են թողել ուսումնական գործընթացի վրա:

/Հիմք՝ Խորհրդատվությունների մատյան և Խորհրդատուների հաշվետվություններ 2022-2023 թթ /:

3. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գործողություն 3.1. Ընդլայնել ամբիոնի դասախոսական կազմի կողմից հրատարակվող գիտական հոդվածների քանակը:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցել է հետևյալ վերապատրաստումների և գիտաժողովների.

Զեյնալյան Արև: “The business of Health Care”- University of Pennsylvania, 23.03.2023-23.05.2023 “Frontiers in Dentistry”- University of Pennsylvania, 01.10.2022-01.11.2022
“HPV associated oral and throat cancer”-Icahn School of Medicine, 10.03.2023-10.04.2023
«Լնդային փոքր ռեցեսիաների վերականցնում»- ՀԱՀ, Հոկտեմբեր 26, 2022 թ.

Գևորգյան Աննա: §Միջմասնագիտական համալիր բուժման ժամանակակից մոտեցումները մասնակի անատամությամբ և վերին շնչուղիների ծավալի կրճատմամբ պացիենտների մոտ ¦ 09.04.2023

“The most complete 1-year programme on orthodontics”- 6 մոդուլ (Փետրվար 13-Դեկտեմբեր 29, 2022թ.)

Բարսեղյան Լիլիթ: The Art of Dentistry by Denis Krutikov- 15, 16, 19 հունիս, 2023թ.
§Նորագույն տեխնոլոգիաները ստոմատոլոգիայում¦ Հայ-ռուսական վեհաժողով, մայիս 14, 2022

Պետրոսյան Տաթև: Ցավի ակադեմիա N 6 գիտաժողովին-05.03.2022

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 4.1. Ուսանողների հետ հետադարձ կապի ապահովման բարելավում

«Ստոմատոլոգիայի» ամբիոնի և միշտ կարևորել է ուսանողների հետ հետադարձ կապը: Ողջ 2022-2023 ուստարում դասախոսները պարբերաբար քննարկել են ուսանողների՝ դասերի ընթացքում ծագող խնդիրները, թերությունները: Ուսումնական գործընթացում բարելավումներ իրականացնելու նպատակով՝ ամբիոնի վարիչը պարբերաբար քննարկումներ է ունեցել ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ, ինչը թույլ է տվել ծագած խնդիրների լուծման նոր ուղիներ մշակել:

Գործողություն 4.2. Մասնակցություն ներհամալսարանական ՈԱ միջոցառումներին:

«Ստոմատոլոգիայի» ամբիոնը 2022-2023 ուստարում մասնակցել է ԱԲՀ-ի ՈԱ կողմից կազմակերպված միջոցառումներին և հանդիպումներին, հանդես եկել նորանոր առաջարկություններ:

«ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ» ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ բ.գ.թ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Պաշտոնական փաստաթուղթը գտնվում է
համալսարանում: